ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2021 թ.

«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ՊԱՐՈՆ Գ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ
grisha.balasanyan@hetq.am

Հարգելի պարոն Բալասանյան,

Ձեր 15.07.2021թ. ինձ հասցեագրված գրությունում նշված ժամանակահատվածում հրաժարականի դիմում են ներկայացրել ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղ և Սարալանջ համայնքների ղեկավարները:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան և հիմք ընդունելով Հարթագյուղ և Սարալանջ համայնքների ղեկավարների դիմումները՝ համայնքների ավագանիները կազմել են համայնքների ղեկավարների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություններ և օրենքով սահմանված կարգով ընթացք տվել: Համայնքների ղեկավարների դիմումներում հրաժարականի պատճառ է նշված «առողջական վիճակը»:

ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը ներկայացրել է պաշտոնից ազատման դիմում, որի հիման վրա ՀՀ Լոռու մարզպետի 25.06.2021թ. 311-Ա որոշմամբ ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Նույն ժամանակահատվածում իրենց զբաղեցրած պաշտոններից ազատվել են մարզպետարանի երկու աշխատակիցներ՝

1. Լոռու մարզպետի տեղակալի օգնականը՝ իր դիմումի համաձայն.
2. Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետը՝ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղար նշանակվելու հիմքով:

Լոռու մարզպետարանում Ձեր գրության 2-րդ և 4-րդ կետերում նշված հարցերի վերաբերյալ քննարկումներ չեն իրականացվել:

7/19/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. Մ.Խեչումյան
հեռ. /0322/ 4-09-27